

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

ISSN 1829-054X



Matenadaran
Mesrop Mashtots Institute of Ancient Manuscripts
and “Friends of the Matenadaran” Benevolent Fund express their
gratitude to “JTI ARMENIA” CJSC
for sponsoring the publication of this volume

Մատենադարան
Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտը և
«Մատենադարանի բարեկամներ» բարեգործական հիմնադրամը
երախտագիտություն են հայտնում «ՋԵՅ ԹԻ ԱՅ ԱՐՄԵՆԻԱ» ՓԲԸ-ին
սույն հատորի հրատարակությանն աջակցելու համար



MATENADARAN
MESROP MASHTOTS INSTITUTE OF ANCIENT MANUSCRIPTS

BULLETIN OF MATENADARAN
35

Yerevan – 2023

МАТЕНАДАРАН
ИНСТИТУТ ДРЕВНИХ РУКОПИСЕЙ ИМЕНИ МЕСРОПА МАШТОЦА

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА
35

Ереван – 2023

ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑԻ ԱՆՎԱՆ ՀԻՆ ՁԵՌԱԳՐԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ԲԱՆԲԵՐ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ**

35

*Տպագրվում է Մեսրոպ Մաշտոցի անվան
Մատենադարանի գիտական խորհրդի որոշմամբ*

*Խմբագրական խորհուրդ՝ Գոհար Մուրադյան (գլխավոր խմբագիր), Վահան Տեր-
Ղևոնդյան, Կարեն Մաթևոսյան, Օլգա Վարդազարյան, Վահե Թորոսյան, Թեո վան
Լինտ, Արմեն Մովսեֆյան, Արտաշես Շահնազարյան, Գուրգեն Գասպարյան,
Արուսյակ Թամրազյան, Հայկ Համբարձումյան:*

*«Բանբեր Մատենադարանի» 35, Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի
ին-տ. Երևան, 2023, 320 էջ (ներդիր 8 էջ):*

ԲԱՆՊԱՏԻՐՈՒԹՅՈՒՆ
PHILOLOGY
ФИЛОЛОГИЯ

ՌՈՒԶԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ*

DOI:10.57155/OZYS3316

ԺԳ ԴԱՐՈՒՄ ԸՆԴՕՐԻՆԱԿՎԱԾ
«ԲԱՆՔ ԻՄԱՍՏԱՍԻՐԱԳՅ»-Ի ԶՈՐՍ ՏԱՐԲԵՐ ԲՆԱԳԻՐ

Բանալի բառեր՝ Հույն, փրիստոփա, ժողովածու, ասույթ, Ստոբեոս, խրատ, Հերմես Եռամեծ, Դավիթ Անհաղթ, աստվածաբանություն, Սեկունդոս Լոակյաց:

Հայերեն ձեռագիր ժողովածուներում ընդգրկված «Բանք իմաստասիրաց», «Բանք իմաստնոց» եւ համանման այլ խորագրեր կրող բնագրերի ուսումնասիրության մեջ զբաղվել են հայագետներ է. Տեղան, Յ. Տաշեանը, Ք. Տեր-Դավթյանը եւ ուրիշներ: Բնագիրն առաջին անգամ հրատարակվել է 1853 թ. Վենետիկում լույս տեսած «Սոփերք հայկական»-ի առաջին հատորում¹: Ինչպես նշվում է առաջաբանում, Մխիթարյան հայերեն այն կազմել են, օգտվելով հայերեն հինգ եւ ավելի ձեռագրերից. «Ջնախնի Իմաստասիրացն բանս, զորս իբր երախայրիս Հայկական Սոփերքն ընծայեմք՝ ի վայելս մերոյ ժողովրդեան, հաւաքեալ ամփոփեցաք՝ ի հինգ եւ ավելի գրչագիր մատենից, յորս ցրիւ սփռեալք էին»²: Այդ ձեռագրերի գրչության վայրի ու ժամանակի մասին նրանք որեւէ տեղեկություն չեն հաղորդում, իսկ բնագրի աղբյուրին անդրադառնում են հրատարակությանը հաջորդած հոդվածում. «Կ'երեւի թէ Ստոբեոսի գիրքը կամ անոր համառօտ քաղուածը մեր երանաշնորհ Քարգմանիչ նախնեաց ձեռքն ալ անցեր է, երբ որ ուսումնաստենչ փափաքանօք լցուած՝ ամէն պիտանի եւ օգտակար գրոց թարգմանութեան ետեւէ կ'ըլլային քաղքէ քաղաք ճանապարհորդելով եւ շատ գրատուններ աչքէ անցընելով»³:

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ք.գ.ք., rouzanpoghosian@gmail.com, հոդվածը ներկայացնելու օրը՝ մարտի 24, 2023, գրախոսելու օրը՝ մայիսի 31, 2023:

1 Սոփերք հայկականը, Վենետիկ, 1853, հ. Ա, էջ 9-59:

2 Նույն տեղում, էջ 8:

3 «Սոփերք հայկական», Բազմավեպ, 1853, էջ 252:

Ե դարում Մակեդոնիայի Ստոբեի քաղաքում Յոհան Ստոբեոսի կազմած հույն փիլիսոփաների, գրողների, իմաստունների ասույթների ամբողջական տարբերակը կոչվել է «Չորս գիրք քաղվածքների, ասույթների ու խրատների» (Εκλογῶν, ἀποφθεγμαῶν, ὑποθηκῶν βιβλία τέσσαρα), որտեղ մեջբերված են հարյուրավոր մտքեր Եվրիպիդեսից, Սոֆոկլեսից, Մենանդրոսից եւ այլ հեղինակներից: Ինչպես վկայում է բյուզանդացի եկեղեցական, պետական գործիչ, աստվածաբան, Կ. Պոլսի պատրիարք Փոտի գրադարանում պահվող գրույթյունը, Ստոբեոսն այդ ասույթները ժողովել է իր որդի Սեպտիմիոսին կրթելու համար⁴:

Հույն փիլիսոփաների կամ նրանց վերագրվող ասույթները հայ մատենագրույթյուն են ներթափանցել Զ-Է դարերում: Ասպարեզ է եկել «Բանք իմաստասիրաց պիտանի ամենայն մարդոյ» բնագիրը, որը հայերեն ձեռագրերում հանդիպում է նաեւ «Բանք իմաստնոց», «Բանք եւ խրատ իմաստնոց», «Ի բանից իմաստասիրաց», «Բանք խրատականք ասացեալ իմաստնոց» եւ այլ վերնագրերով: Դրանցում ընդգրկված ասույթները քաղված են տարբեր ժողովածուներից ու խմբավորված են առանձին խորագրերի ներքո՝ «Իմաստութիւն», «Ուսումն», «Բարեկամութիւն», «Իշխանութիւն եւ իշխանք», «Արծաթսիրութիւն» եւ այլն: Դրանք այնքան սիրված ու գնահատված են եղել միջնադարյան Հայաստանում, որ ընդգրկվել են նաեւ քարոզարքերում, փիլիսոփայական եւ աստվածաբանական ժողովածուներում:

«Բանք իմաստասիրաց»-ով զբաղված հայագետներից միայն Էմիլիո Տեզան է հայերեն տպագիր օրինակը համեմատել հունարենի հետ՝ նկատելով բնագրային ու թարգմանական մի շարք աղավաղումներ: Մեզ համար ուսանելի է հատկապես նրա մատնանշած սկզբունքը՝ բնագրի համեմատական քննության համար. «Դեռ շատ ակնկալելիք ունիմք, եւ կատարեալ հաւաքում մը՝ ընտիր ընծայ մը պիտի ըլլայ. հաւաքումն՝ որ յայտնէ թէ իւրաքանչիւր առածք պարունակողք որչափ եւ որպիսիք ին, ի՞նչ իրենց տարբերութիւնք, ո՞ւր գլխաւոր սխալներն, որո՞նք՝ զոր հմուտ ընթերցողն կրնայ ինքիրմէ ուղղել՝ կամ յոյն աղբիւրը գտնելով ու բաղդատելով, իր նախնական ստուգութեան վերածել: Ստուգութիւն կոչածս, ճիշտ բառական թարգմանութիւն ըսել չէ, այլ բառը՝ զոր թարգմանիչն ուզած է գտնել, որովհետեւ յաճախ մերթ սուր, մերթ խորունկ եւ մերթ ալ իրարու հետ կապակցութիւն չունեցող խօսից մէջ, զարմանք չէ որ բուն իմաստը ճշգրիտ ըմբռնած չլլայ»⁵: Իտալացի հայագետն իրավացիորեն պնդում է, որ ամենից առաջ անհրաժեշտ է ձեռքի տակ ունենալ այն բնագիրը, որից օգտվել

⁴ Charles Peter Mason, "Stobaeus", in William Smith, *Dictionary of Greek and Roman Biography and Mythology*, Volume 3, 1870, pp. 914–5 (Photius, *Bibliotheca*, 112a.14-17).

⁵ Է. Տեզա, «Հելլեն իմաստասիրաց հատըմտի խրատք բարգմանեալք ի հայ», *Բազմավէպ*, 1894, էջ 73:

են մեր գրիչները. «Եթէ ի հնուց եղած ու հայու մը ձեռքով հաւաքմունք մը ձեռուրնիս հասած ըլլար, փափաքելի էր փոխանակ ամէն մէկ իմաստուն վճռոց աղբիւրը եւ անոնց հաւաքման սկզբնաւորութիւնը փնտռելու, գտնել յոյն գիրքը մը զոր թարգմանիչն աչքին առջեւ ունեցած ըլլայ: Իսկ հոս նոր հաւաքչաց ձեռք կայ, գիտուն հրատարակիչք՝ որ ընտրութիւն կ'ընեն ու քանի մը գլխոյ կը վերածեն հելլեն, ու երբեմն նաեւ քրիստոնէական, իմաստասիրութեան վարդապետութիւններն»⁶:

Ինչ վերաբերում է բնագրի սկզբնաղբյուրին, նա մի կողմից հավանական է համարում, որ այն կազմվել է Ստոբեոսի գրքից ծաղկաքաղ անելով, մյուս կողմից կարծում է, որ այդպիսի պնդում հնարավոր չէ անել, քանի որ հունարեն բնագրում ասույթները թեպետ ներկայացված են թեմատիկ սկզբունքով, սակայն բաժանված չեն գլուխների՝ ինչպես հայերեն տպագիր օրինակում: Նա նաեւ նշում է, թե յուրաքանչյուր թեմայի վերաբերյալ քանի ասույթ կա Ստոբեոսի գրքում, քանիսը՝ հայերեն տպագիր օրինակում, ցույց տալով դրանց թվաքանակի ակնառու տարբերությունը: Տեղայի հոդվածի վերջին էջում խմբագիրը տեղեկացնում է, որ առաջիկայում կտպագրվի նրա ավարտուն աշխատանքը, սակայն ամսագրի հաջորդ համարներում դրա բացակայությունը վկայում է այն մասին, որ Տեզան ավարտին չի հասցրել իր գործը⁷:

3. Տաշյանն այս բնագրին հակիրճ անդրադարձել է Խիկար իմաստունին նվիրված իր հայտնի ուսումնասիրության մեջ, ընդգծելով, որ թեպետ Խիկարի եթովպերեն բնագիրը չի պահպանվել, սակայն «Բանք իմաստասիրաց»-ի եթովպերեն խմբագրության մեջ գտնվել են Խիկար (*Hêkâr*) իմաստունի տասնհինգ խրատները, որոնք առկա են նաեւ արաբերենում. «Կորնիլ գիտնականը, յիշեալ «Բանք իմաստասիրաց» գործոյն հրատարակիչը, հրատարակած, թարգմանած եւ արաբերէնի հետ համեմատած է նաեւ Խիկարայ այս առածքն»⁸: Այս թեմայի մասին Տաշյանը խոսում է նաեւ Սեկունդոս իմաստասերին նվիրված իր աշխատության մեջ. «Այդ «Բանք իմաստասիրաց» ժողովածոյն շատ այլակերպութիւններ կրած է դժբախտաբար, բայց էական մասն շատ հին է եւ արդէն է դարուն առհասարակ ծանոթ եղած կ'երեւայ: Սեկունդոսի անվամբ քանի մ'ասացուածներ կան այս հաւաքման մէջ, ոմանք գործ չունին մեր Լուսկացին հետ,

⁶ Նույն տեղում, էջ 73:

⁷ Է. Տեզա, «Հելլեն իմաստասիրաց հատընտիր ...», էջ 133:

⁸ 3. Տաշեան, Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, Վիեննա, 1895, մասն երկրորդ, է-ժ, էջ 25:

այլք անկէ առնուած են»⁹: Նա մեջբերում է Սեկունդոսին¹⁰ վերագրվող մի շարք ասույթներ, ինչպես՝ «Սեկունդոսի տեսեալ զոմն զի առ վտանգի մահ կոչէր անձին, ասէ. Ով դու. ընդէ՞ր կոչես զայն, որ թէպէտ ոչ կոչես՝ ինքնակոչ գայ», «Սեկունդոս զմահն քուն ասաց եւ երկիր յմեծատանց եւ իղձք աղքատաց»¹¹, «Սեկունդոսի հարցանելն, թէ զի՞նչ է Կին, ասէ, ընտանի գազան, մարդոյ կուրու-թիւն, տանն մրրիկ, անպարտիս տուգանք, կենաց թշնամի, աթոռակից վիշտ»¹², որոնցից միայն վերջինն է հանդիպում ԺԳ դարի շորս ձեռագրերում, որոնց համեմատական քննությունը կներկայացնենք սույն հոդվածում:

Քնարիկ Տեր-Դավթյանն առանձնակի կարեւորություն է տվել հայ միջնադարյան մտքի պատմության մեջ ասույթների ժողովածուների նշանակալից դերին եւ դրանց թարգմանական հարցերին. ««Բանքը» լայն տարածում է գտել հայ միջնադարյան գրականության մեջ: Նրանում ամփոփված իմաստասերների ասույթներով, թեւավոր խոսքերով դարեր շարունակ սնվել են մեր բարոյախրատական եւ կրթական ձեռնարկները, քարոզգրքերը եւ այլ ժողովածուները՝ հարստացնելով եւ ավելի պատկերավոր դարձնելով հայոց լեզուն: Այն պահպանվել է ԺԳ-ԺԶ եւ ավելի ուշ դարերի շուրջ հարյուր գրչագրերով»¹³: Քնարիկ Տեր-Դավթյանը կազմել է Ժէ դ. հայ մատենագիր Զաքարիա Բեռնատովիչի

⁹ **Յ. Տաշեան**, *Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք*, Վիեննա, 1895, մասն առաջին, Ա-Զ, էջ 210-211:

¹⁰ Ք.հ. Ք դարում ապրած կիմիկյան եւ նոր պյոտագորական փիլիսոփա Սեկունդոս լուսկյաց: Պահպանվել են նրա անանուն կենսագրությունը և ասույթները՝ *Secundus the silent philosopher*, ed. **B. E. Perry** (American Philological Association Philological Monographs 22), Ithaca, New York: American Philological Association, 1964], pp. 68–78: “Vita Secundi,” pp. 78–90: “Sententiae.”

¹¹ Հմմտ. նույն տեղում, 20.1-2. Τι ἐστὶ θάνατος; Αἰώνιος ὕπνος... πλουσίων φόβος, πενήτων ἐπιθυμία – «Ի՞նչ է մահը: Հավերժական քուն... հարուստների սարսափ, աղետների բաղձանք»:

¹² **Յ. Տաշեան**, *Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք*, էջ 210-211: Հմմտ. *Secundus the silent philosopher*, “Sententiae,” 10. Τι ἐστὶ γυνή; Ἄνδρὸς ἐπιθυμία, συνεστώμενον θηρίον, συνεγειρομένη μέριμνα, συμπλεκομένη ἀσέλγεια, συγκοιμωμένη λέαινα, ἱματισμένη ἔχιδνα, αὐθαίρετος μάχη, συγκοιμωμένη ἀκρασία, καθημερινὴ ζήμια, οἰκίας χειμῶν, ἀμεριμνίας ἐμπόδιον, ἀνδρὸς ἀκρατοῦς ναύγιον, μοιχῶν κατασκευή, βίου ἄλωσις, πολυτελὴς πόλεμος, ζῶον πονηρόν, ἱκανὸν φορτίον, ἐννεαπνεύμων ζάλη, ἰοβόλος ἀσπίς, ἀνθρωποποιὸν ὑποῦργημα, ἀναγκαῖον κακόν – «Ի՞նչ է կինը: Այրի ցանկություն, սեղանակից գազան, նորոգված հոգս, խենված սանձառակություն, անկողնակից էգ առյուծ, հագնված իծ, իմենակամ ընտրված կռիվ, անկողնակից անզուպվածություն, ամենօրյա պատիժ, տան աղետ, անհոգության արգելի, տկար այրի նավաբեկություն, շնացողների հորինվածք, կյանքի գերություն, թանկարժեք պատերազմ, շար կենդանի, զգալի բեռ, ինը հողմի ուժգնությամբ փոթորիկ, թունաբեր քար, մարդաստեղծ սպասավորություն, անհրաժեշտ շարիք» (թարգմ. Գ.Մ.):

¹³ **Ք. Տեր-Դավթյան**, ««Բանք իմաստասիրաց» ժողովածուները հայ միջնադարյան մատենագրության մեջ», էջ միածին, 2003, Ժ-ԺԱ, էջ 93:

Թարգմանած «Բանք իմաստասիրաց» ժողովածուի բնագիրը, որը, սակայն, որեւէ առնչություն չունի հույն փիլիսոփաների ասույթների հետ, պարունակում է կարճառոտ բարոյախոսական գրույցներ հին աշխարհի փիլիսոփաների, կայսրերի, իշխանների եւ այլոց մասին. «Թարգմանությունը կատարվել է լեհերենից, դրա հիմքում ընկած է լեհ հեղինակ Բենյուշ Բուզնու «Չորս գիրք հակիրճ եւ պերճախոս պատմությունների», որոնք հունարեն կոչվում են Ապոթեգմատա: Այն հրատարակվել է ԺԶ դարի սկզբին եւ լայն ճանաչում գտել»¹⁴:

Նկատի առնելով, որ ուսումնասիրողները հիմնականում ուշադրության են արժանացրել ԺՁ-ԺԷ դդ. ձեռագրերին, մենք կքննենք ամենավաղ՝ ԺԳ դարի շորս ժողովածուներում ընդգրկված բնագրերը, որոնք էականորեն տարբերվում են ոչ միայն վերնագրերով, այլ նաեւ ասույթների թեմատիկ կառուցվածքով ու բովանդակությամբ:

Ա. ՄՄ 6058, ժողովածու, **Ի բանից վարդապետաց եւ իմաստնոց (103բ-123բ), ԺԳ դ.**, գրիչ՝ Տիլայ Պարոն, գրչության վայր՝ անհայտ:

Բ. ՄՄ 5862, ժողովածու, **Բանք իմաստասիրաց եւ ազտակարք եւ պիտանացուք (267ա-271ա), ԺԳ դ.** (1290 թվականից առաջ), Սյունիք, գրիչ՝ Սարգիս:

Գ. ՄՄ 2273, ժողովածու, **Բանք իմաստասիրաց ամենացոց (176ա-82բ), 1252 թ.**, Խորանաշատ, գրիչ՝ Գրիգոր քահանա, ստացող՝ Ստեփանոս քահանա:

Դ. ՄՄ 1409, ժողովածու, **Ի բանից իմաստնոց (344բ-5ա), 1298 թ.**, Գլաձոր, գրիչ՝ Մկրտիչ Թեղենացի:

Բնագրերի համեմատական աղյուսակը կազմել ենք Տեզայի առաջարկած սկզբունքով, այսինքն՝ ասույթները խմբավորել ենք թեմատիկ հաջորդականությամբ, ըստ տպագիր օրինակի՝ Սոփերքի հետ համընկնող ասույթների թվաքանակի: Առաջին աղյուսակում Սոփերքի թեմատիկ վերնագրերն են՝ ասույթների քանակով, մյուսներում՝ բնագրերի վերնագրերն ու ասույթների քանակը: Քանի որ դրանց վերնագրերը հաճախ չեն համընկնում Սոփերքի հետ, աղյուսակում հատուկ ընդգծված են: **Ա.** եւ **Բ.** բնագրերում առաջին ասույթներից առաջ թեմատիկ վերնագիր չկա, ուստի նշված են միայն Սոփերքի վերնագրերը: **Գ.** եւ **Դ.** բնագրերում ասույթները հաջորդում են միմյանց առանց թեմատիկ վերնագրերի, հետեւաբար ներկայացված են միայն Սոփերքի ենթավերնագրերով:

¹⁴ Բանք իմաստասիրաց, աշխատ. Քնարիկ Տեր-Դավթյանի, Երևան, 2001, էջ 7:

Սովեթ Հայկական Բան իմաստասիրաց	ՄՄ 6058 Ա. Ի բանից վարդապետաց և իմաստնոց	ՄՄ 5862 Բ. Բան իմաստասիրաց և սուգակարգի պիտանացոյ	ՄՄ 2273 Գ. Բան իմաստասիրաց աթենացոց	ՄՄ 1409 Դ. Ի բանից իմաստնոց
Ա. Իմաստութիւն (27)	Իմաստութիւն (2) Բարեկամութիւն և բարեկամք (25)	Իշխանութիւն և իշխանք (1) Իմաստութիւն (6)	Իմաստութիւն (9)	Իշխանութիւն և իշխանք (4)
Բ. Ուսումն (6)	<u>Յաղագս իշխանութեան</u> Իշխանութիւն և իշխանք (16)	<u>Վասն արիւթեան</u> Արիութիւն (1) Իմաստութիւն (6)	Բարեկամութիւն և բարեկամք (10)	Իմաստութիւն (1)
Գ. Բարեկամութիւն և բարեկամք (26)	<u>Յաղագս երդման</u> (3)	<u>Վասն բարեկամաց</u> Բարեկամութիւն և բարեկամք (16)	Իշխանութիւն և իշխանք (5)	Յաղագս անառակութեան (1)
Դ. Իշխանութիւն և իշխանք (17)	<u>Յաղագս խրատու և իմաստութեան</u> Յաղագս խրատուց (9) Ուսումն (5) Իմաստութիւն (7)	<u>Վասն իշխանաց</u> Իշխանութիւն և իշխանք (1) Բարեկամութիւն և բարեկամք (8)	Յաղագս երդման (1)	Արձաթասիրութիւն (3)
Ե. Արիութիւն (2)	<u>Յաղագս բարեբախտից և վատշնորհաց</u> Բաղդ և անբաղդութիւն (9) Յաղագս դատարակութեան որոց (1)	<u>Վասն երդման</u> (2)	Յաղագս խրատուց (3) Ուսումն (5) Իմաստութիւն (4)	Յաղագս ընչից (1)

Զ. Յաղագս ընչից (13)	<u>Յաղագս մեղաց և խոստովա- նութեան</u> Յաղագս մեղաց խոստովանու- թեան (4)	<u>Վասն խրատու</u> (6) Ուսումն (5) Իմաստութիւն (6)	Բաղդ եւ ան- բաղդութիւն (1)	Գինի եւ ար- բեցութիւն (1)
Է. Արծաթի- րութիւն (19)	<u>Յաղագս բժշկաց</u> Յաղագս բժշկաց (5)	<u>Վասն բախտի</u> (6)	Յաղագս մեղաց խոստովանու- թեան (4)	
Ը. Յաղագս փառաց (5)	<u>Յաղագս չար կանանց</u> Յաղագս կնոջ չարաբարոյի (5)	<u>Վասն խոստո- վանութեան</u> Յաղագս մե- ղաց խոստո- վանութեան (2)	Յաղագս բժշկաց (2)	
Թ. Յաղագս մահոտան եւ փոխելոյ ի կե- նաց (22)	<u>Յագաղս արի- նաց</u> Յաղագս օրի- նաց (8)	<u>Վասն բժշկաց</u> (1)	Յաղագս անա- ռակութեան (3)	
Ժ. Վասն լա- ազգացու- թեան (9)	<u>Յաղագս անա- ռակութեան</u> (1)	<u>Վասն չար կա- նանց (3)</u> ¹⁵ Յաղագս կնոջ չարաբարոյի (3)	Յաղագս ընչից (2) Արծաթասիրու- թիւն (3)	
ԺԱ. Յաղագս լոտութեան (20)	<u>Յաղագս նա- խախնամու- թեան (4)</u>	<u>Վասն արի- նաց (6)</u> Յաղագս անա- ռակութեան (1)	Գինի եւ արբե- ցութիւն (4)	

¹⁵ Վեց ասույթներից երեքը չեն պահպանվել Սոփերքում:

<p>ԺԲ. Բաղդ և անբաղդություն (9)</p>	<p><u>Յաղագս փարթամության, աղբատության և արծաթասիրության</u> Յաղագս ընչից (13) Արծաթասիրություն (19)</p>	<p><u>Վասն խնամոց</u> Յաղագս նախախնամության (3)</p>	<p>Վասն պատույ հարց (3)</p>	
<p>ԺԳ. Գինի և արբեցություն (10)</p>	<p><u>Յաղագս աղապից¹⁶ (1)</u></p>	<p><u>Վասն հարստության</u> Յաղագս ընչից (6) Արծաթասիրություն (5)</p>	<p>Յաղագս դատիարակության որդուց (2)</p>	
<p>ԺԴ. Շոգմոզի և շոգմոզություն (7)</p>	<p><u>Վասն արբեցության</u> Գինի և արբեցություն (10)</p>	<p><u>Վասն արբեցության</u> Գինի և արբեցություն (4)</p>	<p>Վասն լաւագություն (1)</p>	
<p>ԺԵ. Յաղագս պատու հարց (9)</p>	<p><u>Յաղագս պատույ հարց ու որդխիրության</u> Յաղագս պատույ հարց (8) Յաղագս դատիարակության որդուց (3) Յաղագս օրինաց (1)</p>	<p><u>Վասն պատու հարց</u> Յաղագս պատույ հարց (7) Յաղագս դատիարակության որդուց (2)</p>	<p>Յաղագս լուրեան (13)</p>	
<p>ԺԶ. Յաղագս դատիարակության որդուց (6)</p>	<p><u>Յաղագս շոգմոզության</u> Շոգմոզի և շոգմոզություն (7)</p>	<p><u>Վասն շոգմոզության</u> Շոգմոզի և շոգմոզություն (6)</p>	<p>Յաղագս փառաց (2)</p>	
<p>ԺԷ. Յաղագս օրինաց (8)</p>	<p><u>Յաղագս քառանկարության և վատագագություն</u> Վասն լաւագագության (8)</p>	<p><u>Վասն լաւագագության</u> (9)</p>	<p>Յաղագս մահուան և փոխելոյ ի կենաց (6) Իմաստություն (4)</p>	

¹⁶ Սոփերբում՝ չիֆ:

ԺԸ. Յաղագս անստակութեան (4)	<u>Յաղագս լուրջեան աննառելեացն</u> Յաղագս լուրջեան (18)	<u>Վասն լուրջեան</u> Յաղագս լուրջեան (16)	Բարեկամութիւն եւ բարեկամք (1)	
ԺԹ. Յաղագս խրատուց (10)	<u>Վասն հանդերձեալ դատաստանին</u> Յաղագս մեղաց խոստովանութեան (2)	<u>Վասն դատաստանի</u> Յաղագս նախախնամութեան (1)	Յաղագս մահուան (2)	
Ի. Յաղագս բժշկաց (5)	<u>Յաղագս փառաց</u> Յաղագս փառաց (5)	<u>Վասն փառաց</u> Յաղագս փառաց (3)		
ԻԱ. Յաղագս երգման (3)	<u>Յաղագս մահուան</u> ¹⁷ Յաղագս մահուան եւ փոխելոյ ի կենաց (19) Յաղագս դատախարակութեան որդուց (1) Յաղագս խրատուց (1) Շոգմոզք եւ շոգմոզութիւն (1)	<u>Վասն մահուան (1)</u> Յաղագս փառաց (16)		
ԻԲ. Յաղագս մեղաց խոստովանութեան (4)		<u>Վասն իշխանաց</u> Իշխանութիւն եւ իշխանք (3)		
ԻԳ. Յաղագս նախախնամութեան (6)		<u>Յաղագս աստվածութեան</u> ¹⁸ (16)		
ԻԴ. Յաղագս կնոջ շարաքարոյի (28)		<u>Այլ բան (1)</u>		

¹⁷ Մի քանի ատույթ բացակայում են Սոփերբում:

¹⁸ Սոփերբում չիք:

Ինչպես նկատելի է, վերոբերյալ շորս բնագրերն ունեն կառուցվածքային եւ բովանդակային ակնհայտ տարբերություններ: Հավելենք միայն, որ Ա. բնագիրը սկսվում է «Յաղագս իմաստութեան եւ պէսպէս խրատու» ենթավերնագրով, որին անմիջապէս հաջորդում է հետեւյալ միտքը. «Իմաստութիւն զամենայն խոր բան քննեսցէ եւ մարգարէութիւն ստեպ արասցէ: Զպատգամս անուանի արանց պահեսցէ եւ յառակա արինաց նոցա շրջեսցէ: Սիրտ իւր տացէ կանխեալ առ Տէր եւ առաջի բարձրելոյն բացցէ զբերանն իւր եւ քաւեսցին մեղք նորա: Զբանս անհաս քննեսցէ, եւ զխրատ վարդապետական յայտնեսցէ եւ հանապազ յարենս կտակարանացն Տեառն պարծի: Զիմաստութիւն նորա տեսցեն բազումք, եւ յաւիտէնս յաւիտէնից արհնեսցէն զնա, եւ զանուն նորա կէ կամացն: Եթէ կարի սակաւուք երթաս, ասէն սակաւք են, բայց յաւժարք են¹⁹»:

Վերջին նախադասությունը համապատասխանում է Սոփերքի «Իմաստութիւն» վերնագրի 18-րդ ասույթին. «Ղեւոնիդէս²⁰ լակեղեմոնացի քանզի սակաւուք երթայր ի պատերազմ, ասեն ցնա. Սակաւ են զօրքդ, եւ նա ասէ. **Սակաւք են՝ բայց յօժարք են**»: Այս բնագիրը, ինչպէս նշեցինք, սկսվում է առանց թեմատիկ վերնագրի, առաջին ասույթն է՝ «Մոսոնիս²¹ ասէ. յափշտակեա զբարիոք մեռանելն յորժամ պարտ է, զի մի յետ փոքր ժամանակի զմեռանիլն ընդունիցես, իսկ զբարիոքն՝ ոչ» (Սոփերք, Իմաստութիւն, 19): Ինչպէս մյուս երեք բնագրերում, այստեղ եւս կան ասույթներ, որոնք, ի տարբերություն Սոփերքի, վերագրված են մեկ այլ փիլիսոփայի.

Սոփերք (Բարեկամութիւն եւ բարեկամք, 8). «Դեմոսթենէս նախատեալ լինէր՝ յաճախ ընդ շարս շրջելով, ասէ. եւ բժիշկք ընդ ախտաժէտս, այլ ինքեանք ողջ են»:

Բնագիր Ա. «Ռոմիլոս²² քանզի ասեին ցնա թե ընդե՞ր հանապազ ընդ շարս եւ ընդ անպիտան մարդիկ շրջես, ասէ. եւ բժիշկ հանապազ ընդ հիւանդս եւ ընդ ախտաժէտս, այլ սակայն ինքեանք առողջ են»:

Մենանդրոսի (Սոփերք, Գինի եւ արբեցութիւն, 10) «Ի գինուջ մի՛ շատախօս լինիցիս, զի ցուցանիցես հրահանգս, քանզի կաղ է զոր խօսիսդ» խրատը վերագրված է Եպիքտատոսին²³: Այս ասույթը բովանդակութեամբ մոտ է Խիկար իմաստունի՝ «Որդեակ, յորժամ ըմպես գինի, մի շատախօսիր, զի շատախօսիս՝

¹⁹ ՄՄ 6058, էջ 103:

²⁰ Երեւ հարյուր սպարապետների զորավար Լեոնիդան է, որը նրանց հետ միասին զոհվեց Ք.ծ.ա. 480 թ. Թերմոպիլեի հակատամարտում՝ դիմակայելով բազում անգամ իրենց գերազանցող պարսից բանակին:

²¹ Ըստ ամենայնի, Ք.ծ.ա.Ա. դարի հռոմեացի հումագիր ստոիկյան փիլիսոփա Գայոս Մուսոնիոս Ռուփոսն է:

²² Հռոմի առասպելական հիմնադիր Հոմուլոսն է:

²³ Էպիկտետոսը Ք.հ. Ա-Բ դդ. ապրած ստոիկյան փիլիսոփա է:

կռիւ լինի, եւ հետ կովոյն՝ սպանութիւն» կամ «Որդեակ, եթէ գինի ըմպես, պահեա զլեզու քո ի շատախօսութենէ եւ բարի լինի քեզ, եւ կոչիս իմաստուն» խրատներին: Այդպես նաեւ Փիլիստոնի միտքը վերագրված է ոմն իմաստասերին, Ջենոնինը՝ ոմն պատանուն, Կղեստոսինը՝ Պլատոնին եւ այլն: Ուշագրավ է, որ թեմատիկ տարբեր վերնագրերի ներքո այստեղ ընդգրկված եվկղիրիսոսի, Ջելեկոսի, Ապոլինոսի, Թեոփրատոսի, Իրակլեսի, Սաբուրինոսի, Գեմոկրիտեսի, Պլատոնի, Ուրիոնի, Հոմերոսի, Մենանդրոսի, Ուրելիոսի, Դիմոսթենեսի, եղիշայի ասույթները չենք գտնում ինչպես Սոփերքում, այնպես էլ մյուս բնագրերում: Որոշ ասույթներ Սոփերքում առկա են համառոտ տարբերակով, ինչպես օրինակ՝ «Կուտ թագաւոր Ղակեդեմոնացւոցն ասէ ցԹրակացիսն որք խրոխտային՝ ՚ի վերայ նորա. եւ իմ տեսեալ է ուղիս հեղեղաց որոտացեալս, այլ առ սուղ ժամանակս» (Իշխանք եւ իշխանութիւն, 17), որի շարունակութունը՝ «նմա հարցեալ, թէ ում թողուս զթագաւորութիւն քո, ասէ. կարողին», պահպանվել է Ա., Բ. եւ Գ. բնագրերում: Հետաքրքրական է, որ Ա. բնագրում առկա «Մի՛ երբեք երդնուցուս յաստուած զի ոմանց երեւէսցիս իրաւի երդուալ, իսկ ոմանց վասն ընշասիրութեան» ասույթը հանդիպում է նաեւ Գ. բնագրում, ինչը թույլ է տալիս մտածել, որ վերոնշյալ ձեռագրերի գրիչները գուցե ծաղկաքաղ են արել միեւնույն աղբյուրից: Կանանց մասին Սեկունդոս իմաստասերին վերագրված ասույթի մեկ այլ՝ ավելի երկար տարբերակ գտնում ենք նաեւ այս բնագրում՝ «ՁՍեկունդոս հարցանեն վասն կանանց, թէ զի՞նչ է կին չար, ասէ. առն ընկղմումն, տան մրրիկ, անհոգութեան արգելումն, կենաց կողոպտիչ, համարեն տուգանք, հանապազորդ մախանք, բազմադեմ պատերազմ, հացակից գազան, աթոռակից վիշտ, կենդանի չար, եւ հարկաւ, միատուն թշնամի»: Ի դեպ, Սոփերքի առաջին հատորում ընդգրկված «Խօսք Սեկունդոսի իմաստասիրի» բնագրում այս ասույթի մեկ այլ տարբերակ վերաբերում է ոչ թե չար կանանց, այլ ընդհանրապես կին երեւույթին. «Զի՞նչ է կին: Առն մխիթարութիւն, ընտանի գազան, ոգւոց պառճառք, իժ ըզգեստիւ պատեալ, ինքնայօժար՝ ՚ի կոխ, հանապազորդեան վնաս՝ ՚ի տանն, ձմեռն անժոյժ, առն ընկղմումն, աշխարհի կործանումն, սուր որ ոչ տայ զգալ, կռիւ բազմադիմի, կենդանի չար, սատար՝ ՚ի ծնունդս մարդկան, պարաւանդ աներեւոյթ»²⁴:

Բ. եւ Գ. բնագրերն ունեն այս ասույթի կարճ տարբերակը: Համեմատենք.

Բ. «Սեկունդոս ի հարցանելն, թէ զի՞նչ է կին, ասէ. Ընտանի գազան, մարդոյ կուրութիւն, տան մրրիկ, տուգանք, կենաց թշնամի, աթոռակից վիշտ»:

Գ. «Սեկունդոս ի հարցանելն նմա, թէ զի՞նչ է կին, ասէ առն ընկղմումն, համարեն տուգանք, հանապազորդ մաղանք, բազմադեմ պատերազմ եւ հարկաւ միատուն թշնամի»:

²⁴ Սոփերք Հայկականք, էջ 67:

Տաշյանն այս ասույթը նշանավոր է համարում այն առումով, որ հայերեն ձեռագրերում գրիչներն ավելացրել են նոր բառեր եւ արտահայտություններ, ինչպես՝ «ընտանի գազան», «կենաց թշնամի» եւ այլն, որոնք պակասում են թե՛ հունարենում, թե՛ հայերեն մի շարք ձեռագրերում²⁵:

Ա. բնագրի յուրահատկություններից է նաեւ «Յաղագս աղաւթից»-ը. «Բիանտոս ասէ՛ զխնդրողսն ամենայն խելս բարիս եւ ինքեանս անխրատ գոլ, անիմայ ասեմ, քանզի ոչ դեղագործաւղի աղաւթիւք տացի գիծ եւ գեղեցկութիւն նկարից, եւ ոչ երաժշտականաց երաժիշտ եւ յագներգութիւն: Եթէ ոչ ուսմամբ ընդունին զհմտութիւն արհեստիցն, նոյնպէս եւ ոչ խելաւք հնարիցէ ումեք աղաւթել, եթէ ոչ ուսմամբ ստանալով առցէ»²⁶, որը չենք գտնում մյուս բնագրերում:

Ինչ վերաբերում է Բ. բնագրին, այն սկսվում է «Պղատոն ասաց. Որք մեծաց առաջի կան, մեծի զգաստութեան պէտք են» ասույթով, որը Սոփերքում «Իշխանութիւն» ենթավերնագրի շորրորդ ասույթն է: Առաջին թեմատիկ վերնագիրը՝ «Վասն արիութեան», համապատասխանում է Սոփերքի հինգերորդ վերնագրին, սակայն առաջին ասույթը՝ «Սոկրատէս տեսեալ ուժգնագոյն պարսպեալ զկորնթացիս, ասաց. Միթէ կանայք բնակեալ աստ», չի պահպանվել Սոփերքում: Կարելոր է նշել, որ կանանց վերաբերյալ մի շարք ասույթներ, ինչպես՝ «Բռնադատ ցանկացաւ ոմն կին առնուլ, զբազումս ածելով առ նայ զորս ընտրեսցէ: Եւ նա առաջ փոքր ուսումն ասելով. Ի գազանաց զփոքրն ընտրելի է, երբ չէ հնար», «Ոմն շիներ տուն եւ դներ աղիւսի հիմն, եւ սերտ քարինս վերոյ եւ ի յասելն թէ զինչ գործես, ասէ. կին կամիմ ածել, որ առնէ զվերին ներքին եւ զներքին վերին», նույնպես ընդգրկված չեն Սոփերքում:

Այս բնագիրը մյուսներից տարբերվում է մի շատ կարելոր առանձնահատկությամբ՝ միակն է, որ ավարտվում է «Յաղագս աստվածութեան» (270b) ենթավերնագրով, որի առաջին ասույթն է՝ «Հերմէս նշանաւոր փիլիսոփայ ասէ. երեք զաւրութիւնք, մեծք երկնից անճառելիք, ամենեցուն արարիչ եւ է միաստվածութիւն: Հերմէս կոչեցաւ, զի վասն բնութեան ճառէ», որին հաջորդում են Առիսկոսի, Թելոսի, Փիլիսոփոսի²⁷, Արիստոտելի, Սոկրատի, Սոֆոկլեսի, ոմն գետնակոչի, Սողոմի, Պլատոնի կամ նրանց վերագրվող ասույթները: Կարելոր է նշել, որ Հերմեսի վերոնշյալ միտքը «Հերմէայ Եռամեծի առ Ասկղեպիոս Սահմանք»-ում արտահայտված է միանգամայն այլ ձևով. «Ապա երեք ուրեմն աշխարհք: Արդ՝ անշարժելի աշխարհ աստուած, իսկ բանաւոր աշխարհ

²⁵ **Յ. Տաշեան**, Մատենագրական մանր ուսումնասիրութիւնք, Ա.-Ձ, էջ 212:

²⁶ ՄՄ 6058, էջ 116ա.

²⁷ Այս երեք անուններն այնքան աղավաղված են, որ դժվար է կոսմոսի դրանց նիշտ ձևերը:

մարդ. զի երկու միակք մի՝ աստուած եւ ըստ տեսակին մարդ»²⁸:

Ինչպես նկատել է հերմեսյան բնագրերի գիտակ, հայագետ Ժան-Պիեռ Մահեն, **ԺԵ** եւ հետագա դարերի որոշ հայերեն ձեռագրերում Հերմեսի փոխարեն թյուրիմացաբար նշվում է Հոմերոսի անունը²⁹: Հայերեն ձեռագրերում այս ասույթը հանդիպում է նաեւ «Աստուածաբանութիւն իմաստասիրացն», «Վկայութիւն արտաքնոց փիլիսոփայից վասն աստուածութեան» եւ համանման այլ վերնագրերով: ԺԳ դարի մեկ այլ ժողովածուում այն կոչվում է «Յաղագս աստուածութեան իմաստասիրութիւն», սակայն ավարտվում է ոչ թե «Այլ բան»-ով, այլ՝ Դեմոսթենեսի «Որպես մարմին անհոգի մեռեալ է, նոյնպէս քաղաք առանց արինաց մեռեալ եւ աւերակ» ասույթով³⁰, բացի այդ, այստեղ պակասում են էպիքարմոսի, Սոկրատի եւ Թեոնասի ասույթները:

Արմաշի վանքի ձեռագրացուցակում ԺԼ դարի «Գիրք իմաստասիրաց»-ի նկարագրութեան մեջ մենք գտանք «Աստուածաբանութիւնք իմաստասիրացն եւ այլ առակայխաւսութիւն նոցա»-ն, որը ոչ թե հաջորդում, այլ նախորդում է «Վասն բարեկամաց» թեմատիկ վերնագրով սկսվող «Բանք իմաստնոց»-ին³¹: Դատելով ենթավերնագրերից, փիլիսոփաների անունների հաջորդականութեանից ու վերջաբանից, կարող ենք ասել, որ այն ամբողջապես չի համապատասխանում **Բ.** բնագրին:

Ինչպես երեւում է աղյուսակից, այս բնագիրն ավարտվում է՝ «Այլ բան. Պարտ է յաղքատութենէ փախչել եւ ի մեծ ծով անկանել եւ ի վիմաց հոսել ի բարձանց» ասույթով, որը մոտ է «Գիրք պիտոյից»-ի «Յաղագս խրատու» ենթագլխի երրորդ խրատին. «Արժան է յաղքատութենէ փախչել, եւ ի մեծն անկանել ծով, եւ կամ ի դիմաց հոսիլ ի բարձանց»: Այստեղ այն վերագրված է հին Հունաստանի յոթ իմաստուններից Բիաս Պրիենացուն (Ք.ծ.ա. 9. դ.), իրականում թարգմանված է Ք.ծ.ա 9 դարի բանաստեղծ Թեոգնիսի մի խրատական բանաստեղծութունից: Նույն երկտողը՝ ավելի ամբողջական տեսքով մեջբերել է նաև Դավիթ Անհաղթ փիլիսոփան.³² «Որպէս եւ Թէոգնիս յայտ առնէ առ ոմն Կիւռնոս ասելով, թէ՛ պարտ է յաղքատութենէ փախչել եւ ի մեծակիտեղն ան-

²⁸ «Հեմմեայ եռամեծի առ Ասկղեպիոս Սահմանն», աշխատ. Սեն Աբելշապյանի, *ԲՄ*, 3, 1956, էջ 298:

²⁹ **Jean-Pierre Mahe**, *Hermès en Haute Egypte*, t. II, *Le fragment du Discours parfait et les définitions hermétiques arméniennes* (coll. Bibliothèque Copte de Nag Hammadi, Textes 7), Québec, 1982, tome II, p. 345-46.

³⁰ ՄՄ 5254, էջ 204ա:

³¹ **Յ. Թօփնեան**, *Յուցակ ձեռագրաց Արմաշի վանքին*, Սուրբ Ղազար, 1962, էջ 184:

³² *Գիրք պիտոյից*, աշխատասիրութեամբ **Գ. Մուրադյանի**, Երեւան, 1993, էջ 49:

կանել ի ծով եւ ի վիմաց հոսիլ յարեգակնակոխ»³³: Դրանք միմյանցից անկախ թարգմանություններ են:

Մյուս երկու՝ Գ. եւ Դ. բնագրերը ծավալով ավելի փոքր են, վերջինս կազմում է ընդամենը մեկ էջ, սակայն երկուսում էլ կան ասույթներ, որոնք չեն հանդիպում մյուս երկու բնագրերում ու Սոփերքում: Գ. բնագրում դրանց թիվն անհամեմատ շատ է. «Կիմոկրատես ասէ. ոչ է բարի ոք որք միտս ունին ընդ անմիտսն եւ որք հրահանգեալ իցեն ընդ անհրահանգան խաւսել», «Հերոզոտոս ասէ. Բարի է որոց քաղցր խաւսին հաւասարելն», «Գեմոկրիտոս ասէ. ցանկութիւն ընչից ամեն մարդոյ է, բայց որ ոչ զմահականացուն այլ զանմահն ստանայ՝ է մարդ կատարեալ», «Հերակլիտոս ասէ. Ճանապարհ իմաստութեան է բարի առնել ինքեան եւ ընկերին» եւ այլն:

Դ. բնագիրը բացառիկ է Պլատոնի հետեւյալ ասույթով՝ «Պղատոն ասէ Թէ ոչ գովեմ զոք նա գետ, որ բազում ինչ ի բերան առել եւ այլ, որ զառաքութեան գործ յուսով ցուցանէ, սպանանէ զանդամ երկրաւորս, խոկայ զմահ եւ զմեռանելն դաստիարակէ զաչս, զի մի ննջեսցի ի քուն հեշտութեան»:

Ի մի բերելով «Բանք իմաստասիրաց»-ի վերոնշյալ շորս բնագրերի համեմատական քննությունը, կարող ենք արձանագրել, որ ԺԳ դարում մեր գրիչներն իրենց ձեռքի տակ ունեցել են հին հունարենից հայերեն թարգմանված ասույթների մեկ կամ մի քանի ժողովածու, որոնցից օգտվել են ծաղկաքաղ անելով: Հավանաբար այդ ասույթները թարգմանվել են մի անհայտ հունարեն ժողովածուից, այնուհետեւ բազմաթիվ փոփոխությունների են ենթարկվել հայկական հողի վրա: Չպետք է բացառել նաեւ նույն ասույթի տարբեր թարգմանությունների հնարավորությունը: Թերեւս դա է պատճառը, որ նշյալ բնագրերից եւ ոչ մեկը չի կարող համարվել մյուսի նախօրինակը: Հետագա դարերի ընդօրինակումները խմբավորելու եւ առանձին հոդվածաշարով ներկայացնելու պարագայում, գուցե մեզ հաջողվի գտնել այն քիչ թե շատ հավանական օրինակը, որից օգտվել են հայ միջնադարյան գրիչները: Դրա համար, անշուշտ, անհրաժեշտ է ունենալ հայերեն բոլոր տարբերակների հրատարակությունը:

³³ Դավիթ Անյաղք, Սահմանք իմաստասիրութեան, աշխատասիրությամբ Սեն Արեւշատյանի, Երեւան, 1960, էջ 74:

* Շնորհակալություն Գոհար Մուրադյանին՝ հոդվածում մի շարք ծանոթագրություններ ավելացնելու համար (10, 11, 12, 20, 21, 22, 23):

RUZAN POGHOSYAN

**FOUR DIFFERENT COPIES OF “SAYINGS OF PHILOSOPHERS”
FROM THE 13TH CENTURY**

Keywords: Greek, philosopher, Miscellany, definition, Stobaeus, proverb, Hermes Trismegistus, David the Invincible, theology, Secundus the Silent.

More than a hundred copies of “Sayings of Philosophers” (Բանք իմաստասիրաց) in the handwritten Miscellanies belonging to the 13th-19th centuries are kept at the Matenadaran. They have been studied by Emilio Teza, Jakobus Dashian, Knarik Ter-Davtyan, and others, but the critical edition still remains unaccomplished. This paper is an attempt to discuss the striking peculiarities of those copies as well as to emphasize the diversity in their content and structure by comparing them with the printed recension published in the first volume of “Sop‘erk‘ haykankank” in 1853. It is devoted to four copies of “Sayings of Philosophers” in the earliest 13th century Miscellanies.

РУЗАН ПОГОСЯН

**ЧЕТЫРЕ РАЗНЫЕ РУКОПИСИ “ИЗРЕЧЕНИЙ
ФИЛОСОФОВ” XIII ВЕКА**

Ключевые слова: Греческий, философ, сборник, изречение, Стобей, наставление, Гермес Трисмегист, Давид Непобедимый, богословие, Секунд Безмолвный.

В рукописных “Сборниках” XIII-XIX вв., хранящихся в Матенадаране, насчитывается более сотни экземпляров “Изречений философов” (Բանք իմաստասիրաց). Их изучали арменоведы Эмилио Теза, Акобос Ташян, Кнарик Тер-Давтян и другие, но научное издание до сих пор остается незавершенным. В данной статье делается попытка рассмотреть особенности этих рукописей, а также подчеркнуть несхожесть их содержания и структуры путем сравнения их с печатной версией, опубликованной в первом томе “Армянских сочинений” (Սոփերկ հայկականք) в 1853. В статье представлены четыре версии “Изречений философов” в самых ранних рукописных сборниках, дошедших до нас с XIII в.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԳԷՈՐԳ ՏԷՐ-ՎԱՐԴԱՆԵԱՆ

Մաշտոցեան Մատենադարանի ձեռագրական հաւաքածուները
(ժողովման պատմութեան համառօտ ուրուագիծ).....5

ՄԱՐԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Ղազար Ջահկեցու «Գիրք աղօթից»-ի 1742-1744 թթ.
տպագրված տարբերակները32

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ԿԱՐԵՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Ներսես Շնորհալու ծննդյան թվականն ըստ
իւր եղբորորդի Գրիգորի հիշատակարանի44

ԱՐՄԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայոց հնագոյն թաղման ծեսերը
(ըստ ազգածին ավանդության տվյալների).....56

ԶՈՀՐԱԲ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Պատեր և պարիսպներ. մասնավորի ու հանրայինի միջև
սահմանները Կիլիկյան Հայաստանի փառաբային միջավայրում.....68

ՀԱՅԿ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Ինչո՞ւ, ե՞րբ և որքա՞ն են ուսում «Սասնա ծռեր»
էպոսում ու միջնադարյան գրականության մեջ. սնունդն ու ծեսը81

ՍԱՄՎԵԼ ՌԱՄԱԶՅԱՆ

Անի փառաբի կործանման մասին թուրքական
ավանդագրոյցը և դրա հայկական արմատները.....108

ՀԱՅԿԱԶ ԳԵՎՈՐԳՅԱՆ, ՀԵՆՐԻԿ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Մարդպետություն գործակալությունը և մարդպետ պաշտոնյան.....129

ԱՇՈՏ ՍԱՐԳՍՅԱՆ

Հայ պատմագրության ուսումնասիրման փառաբանական դիտանկյան
ներածական հարցեր.....158

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՌՈՒՋԱՆ ՊՈՂՈՍՅԱՆ

ԺԳ դարում ընդօրինակված
«Բանմ իմաստասիրաց»-ի շոք տարբեր բնագիր 189

ԱՐՎԵՍՏ

ՇՈՂԱԿԱԹ ԴԵՎՐԻԿՅԱՆ

Գրիգոր Նարեկացու տեսիլի պատկերագրությունը
(Մանրանկարներից մինչև Մխիթարյան
հայրերի հրատարակությունների փորագրանկարներ) 204

ԼՈՒՍԻՆԵ ԲԱՐՍԵՂՅԱՆ

«Հաղորդությունը» Թորոս սարկավազի և Թորոս Տարոնացու
մանրանկարներում 216

ՀՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՆ ՆԱԼԲԱՆԴՅԱՆ, ԳԻԱՆԱ ՄԻՐԻՋԱՆՅԱՆ

Սանահինի արքայական-իշխանական հանգստարանները
Ջաֆարյանների տապանատան հնագիտական
պեղումների համապատկերում 225

ՄԵՐԻ ՍԱՖԱՐՅԱՆ

Մովեդի վանական համալիրը
(2021-2022 թթ. պեղումների արդյունքները) 235

ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ

ԱՐՏԱԿ ՄԱՂԱՅԱՆ

Արցախի բնակավայրերն ըստ Երուսաղեմի
ս. Հակոբյանց վանքի նվիրակի հաշվետումարի 252

ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԹԱՄՐԱԶՅԱՆ

Արամ Քերովբեան, *Ջայն Յանապատի. Եկեղեցական
երաժշտության բարեկարգումը ԺԹ. դարու վերջաւորութեան,*
Ակն ընկերակցութիւն, Փարիզ, 2017 271

ՄԱՀԱՆՈՍԱԿԱՆՆԵՐ

Տաթևիկ Մանուկյան, Գեվորգ Տեր-Վարդանյան (1951-2023)	294
Կարեն Մաթևոսյան, Վարդան Դեվրիկյան (1964-2023)	301
Լինա Պիրադովա, Հայդե Բուշնաուզեն (1939-2023)	309
 <i>ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ հանդեսի հոդվածների</i> ձևավորմանը վերաբերող պահանջներ	311

CONTENTS
BIBLIOGRAPHY**Gevorg Ter-Vardanyan**

The Manuscript Collections of Mashtots Matenadaran 5

Marine Sargsyan

The Versions of the *Prayer Book* by Ghazar Jahkets'i
Printed in 1742–1744 32

HISTORY AND ETHNOGRAPHY**Karen Matevosyan**

The Date of Birth of Catholicos Nersēs Shnorhali
according to the Colophon of his Nephew Grigor 44

Armen Petrosyan

Funeral Rites of Earliest Armenians
(According to Ethnogenic Tradition) 56

Zohrab Gevorgyan

Walls and Fences: Boundaries between the Private
and Public in the Urban Environment of Cilician Armenia 68

Hayk Hambardzumyan

Why, When and How Much They Eat in the Epic
"Sasna Tsrer" and in Medieval Literature? Food and Ritual 81

Samvel Ramazyan

The Turkish Legend about the Destruction of the
City of Ani and its Armenian Roots 108

Haykaz Gevorgyan, Henrik Khachatryan

The Office of Mardpetut'yun and the Mardpet Official 129

Ashot Sargsyan

Introductory Issues Related to the Study of Armenian
Historiography from the Political Aspect 158

PHILOLOGY
Ruzan Poghosyan

- Four Different Copies of “Sayings of Philosophers”
from the 13th Century.....189

ART**Shoghakat Devrikyan**

- Iconography of Grigor Narekats‘i’s Vision
(From Miniatures to Engravings of Mekhitarists’ Publications).....204

Lusine Barseghyan

- Communion of the Apostles in the Miniatures
of T‘oros the Deacon and T‘oros Taronats‘i.....216

ARCHAEOLOGY**Arman Nalbandyan, Diana Mirijanyan**

- Sanahin as a Royal and Princely Cemetery.....225

Meri Safaryan

- The Monastery Complex of Srvegh (Results of excavations 2021–2022).....235

PUBLICATION**Artak Maghalyan**

- The Settlements of Artsakh according to the Donation
Book of the Saint James Monastery of Jerusalem.....252

BOOK REVIEW**Arusiak Tamrazian**

- Aram Kerobian, *A Voice in the Wilderness. Reform of the Church
Music in the Late 19th Century*, Paris, 1917.....271

OBITUARIES

- Tatevik Manukyan**, Gevorg Ter-Vardanyan (1951-2023).....294

- Karen Matevosyan**, Vardan Devrikyan (1964-2023).....301

- Lina Piradova**, Heide Buschhausen (1939-2023).....309

СОДЕРЖАНИЕ

БИБЛИОГРАФИЯ

Геворг Тер-Варданян

Рукописные собрания Матенадарана им. Маштоца..... 5

Марине Саргсян

Версии «Молитвенника» Казара Джахкеци,
напечатанная в 1742-1744 гг. 32

ИСТОРИЯ И ЭТНОГРАФИЯ

Карен Матевосян

Дата рождения католикоса Нерсеса Шнорали согласно
памятной записи его племянника Григора 44

Армен Петросян

Похоронные обряды
древнейших армян (по данным этногонического предания)..... 56

Зограб Геворгян

Стены и заборы: границы
между частным и общественным в городской
среде Киликийской Армении 68

Айк Амбарцумян

Почему, когда и сколько едят в эпосе «Сасунские удалцы»
и в средневековой литературе? Еда и ритуал 81

Самвел Рамазян

Турецкое предание о разрушении города
Ани и его армянские корни 108

Айказ Геворгян, Генрик Хачатрян

Ведомство *мардпетутюн*
и должность *мардпета* 129

Ашот Саргсян

Размышления об изучении армянской
историографии в политическом аспекте 158

ФИЛОЛОГИЯ

Рузан Погосян

Четыре разные рукописи
“Изречений философов” XIII века 189

ИСКУССТВО

Шогакат Деврикан

Иконография видения Григора Нарекаци
(от миниатюр до гравюр изданий Мхитаристов)..... 204

Лусине Барсеган

“Причащение апостолов” в миниатюрах Тороса Дьякона
и Тороса Таронаци..... 216

АРХЕОЛОГИЯ

Арман Налбандян, Диана Мириджанян

Санаин как царская и княжеская усыпальница..... 225

Мери Сафарян

Монастырский комплекс
Срвег (результаты раскопок 2021-2022 гг.)..... 235

ПУБЛИКАЦИЯ

Артак Магальян

Поселения Арцаха согласно книге пожертвований
иерусалимского монастыря свв. Иаковов..... 252

РЕЦЕНЗИЯ

Арусяк Тамразян

Арам Керобян, *Глас в пустыне. Реформа церковной
музыки в конце XIX века*, Париж, 2017..... 271

НЕКРОЛОГИ

Татевик Манукян, Геворг Тер-Варданян (1951-2023)..... 294

Карен Матевосян, Вардан Деврикан (1964-2023)..... 301

Лина Пирадова, Хайде Бушхаузен (1939-2023)..... 309

ԲԱՆԲԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻ

Հատոր 35

BULLETIN OF MATENADARAN

Volume 35

ВЕСТНИК МАТЕНАДАРАНА

Том 35

Համակարգչային ձևավորումը և էջադրումը՝ Անահիտ Խանգադյանի
Շապիկի ձևավորումը՝ Մարտիրոս Տոլմանեանի
Շապիկին՝ Ներսես Շնորհալի, Մանրուսմունք (Գրիմ), 1352 թ., ՄՄ 591
Սրբագրիչ՝ Արմինե Գրիգորյան
Հրատարակչական խմբագիր՝ Հայկ Համբարձումյան

Տպագրված է «ՔՈՓԻ ՓՐԻՆԹ» ՍՊԸ տպարանում

Ք. Երևան, Ներսիսյան 1

Զախսը՝ 70×100 1/16, տպագրական մամուլ՝ 20

տպաֆանակ՝ 150

Մատենադարան

Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի ինստիտուտի

հրատարակչական բաժին, ֆ. Երևան, Մաշտոցի պող. 53, հեռ. (010) 513033

publishing.matenadaran@gmail.com

Ամսագրի քվային տարբերակը՝

banber.matenadaran.am/download-category/բանբեր-մատենադարանի/